ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1957 Общественные науки

Հ. Փալաբյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵԿՐԵՏՆԵՐԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ (1917—1920)

Մեծ Հոկտեմբերի ազատաբեր գաղափարների տարածումը, Կոմունիստական պարտիայի, Սովետական կառավարության առաջին ռևոլյուցիոն ձեռնարկումների, դեկրետների հեղափոխիչ նշանակության պարզաբանումն ու պրոպագանդան այն կարևորագույն խնդիրներից մեկն էր, որ դրված էր բոլշևիկյան հայ պարբերական մամուլի առջև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո։ «Ամբողջ աշխարհով մեկ հնչեցին Հոկտեմբերի առաջին դեկրետները՝ հաշտության դեկրետը, որը իմպերիալիստական պատերազմի դեմ պայքարի, աշխատավորների եղբայրության կրքոտ կոչ էր, հողի դեկրետը, Սովետների համառուսաստանյան համագումարի որոշումը բանվորական և գյուղացիական կառավարություն կազմելու մասին», ասված է ՍՄԿՊ Կենտկոմի պրոպագանդայի ու ագիտացիայի բաժնի և ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի թեզիսներում։

Բոլշևիկյան հայ թերթերն ընդգծում էին, որ դեկրետները պրոլետարիատի դիկտատուրայի իրականացման կոնկրետ արտահայտությունն էին, նրա ամրապնդման ու զարգացման միջոցը։ Կարևոր է նշել, որ բոլշևիկյան հայ մամուլը Սովետները արժեքավորում էր որպես նոր տիպի իշխանության օրգաններ։ Ընդգծելով, որ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի շնորհիվ իշխանությունն անցավ շահագործված դասակարգերի՝ բանվորների և գյուղացիների ձեռքը, «Բանվորի կռիվը» եզրակացնում էր. «Ամբողջ երկիրը կառավարում են և պիտի կառավարեն բանվորների և գյուղացիների խորհուրդները... Ռուսաստանում ստեղծված պետական այս կարգը նոր կարգ է»[1]։ Այդ նոր կարգը ծընվել է ռևոլյուցիոն գոտեմարտերի բովում, բոլշևիկյան պարտիայի ղեկավարության ներքո, պրոլետարիատի ստեղծագործական հանճարի ուժով։ «Բանվորական խորհուրդը,— ընդհանրացնում էր Բաքվի «Կոմունիստ»-ը,— ռուսական պրոլետարական հեղափոխության ստեղծագործության ուղն ու ծուծն է, բանվորական ամենաուժեղ ու իսկական հեղափոխական ղեկավար մարմինը... Բանվորական խորհուրդը պրոլետարական շարժման ստեղծագործող մտքի անմիջական ծնունդն է, բանվորական դիկտատուրայի իրականացման ձևը»[2]։

Խոսելով Հոկտեմբերյան ռևոլյուցիայի շնորհիվ ձեռք բերված պատմական հաղթանակի նշանակության մասին, «Կարմիր օրեր»-ը 1918 թ. հենց առաջին համարում ընդգծում էր, որ տապալելով բուրժուազիայի տիրապետությունը, ռուսական պրոլետարիատը հաստատեց իր դիկտատուրան, հիմնիվեր շուռ տալով մինչև այդ գոյություն ունեցող բոլոր «կնճռոտ» կոչված հարցերը։

---

[1] «Բանվորի կռիվը»,— ՌՍԴ(բ)Պ Կովկասյան երկրային և Թիֆլիսի կոմիտեների օրգան, № 62, 1917։

[2] «Կոմունիստ», Ադրբեջանի Կոմպարտիայի Կենտկոմի և Բաքվի կոմիտեի օրգան, № 6, 1920։

Ցարական կառավարության և բուրժուական ժամանակավոր կառավարության գաղտնի պայմանագրերի հրապարակումով[1], առանց անեքսիայի և կոնտրիբուցիայի հաշտության բանակցություններ սկսելու առաջարկով Սովետական կառավարությունը խառնեց բուրժուական դիվանագիտության բոլոր խաղաթղթերը՝ սկիզբ դնելով նոր, ժողովրդի շահերից ելնող արտաքին քաղաքականության։

«Հոկտեմբերյան հեղափոխությունը,— գրում էր «Կարմիր օրեր»-ը,— տրվեց առաջին և մահացու հարվածը իմպերիալիստական համաշխարհային պատերազմին»[2]։ Արժեքավորելով խաղաղության դեկրետը, «Երկու հրովարտակ» վերնագրով առաջնորդողում «Բանվորի կռիվը» նշում էր, որ Սովետական կառավարությունը «...դիտակցելով ժողովրդի ցանկությունը, ամենից առաջ և գլխավոր ուշադրության առարկա դարձրեց հաշտության դեկրետը... Այդ դեկրետը մի ապտակ է ռուս-եվրոպական իմպերիալիստական բուրժուազիային և պատմական դոկումենտ ռուս պրոլետարիատի ինտերնացիոնալիստական դիտակցության»[3]։

Խաղաղության դեկրետով Սովետական կառավարությունը արտահայտում էր ոչ միայն Ռուսաստանի աշխատավորության ցանկությունը, այլև նպատակ ուներ ընդհանրապես վերջ տալու համաշխարհային իմպերիալիստական պատերազմին։ Մյուս կողմից խաղաղության դեկրետը, համաշխարհային սպանդը դադարեցնելու կոչը ռևոլյուցիոնացնող մեծ ազդեցություն գործեց, ցույց տալով, որ իմպերիալիստական պատերազմին վերջ տալու միակ արմատական միջոցը դա յուրաքանչյուր երկրում բուրժուազիայի տիրապետությունը տապալելու և իշխանությունը ժողովրդին հանձնելու ճանապարհն է։ Այսպիսով, խաղաղության դեկրետը ստանում էր պրակտիկ-ռևոլյուցիոն նշանակություն։ «Ռուսական հեղափոխական կառավարությունը,— գրում էր «Բանվորի կռիվը»,— տառապող մարդկությանը խաղաղություն է տալիս — դա փաստ է և այդ դիտակցությունը ոգևորում է բոլոր հեղափոխականներին ու տասնապատկում նրանց եռանդը»[4]։

Բոլշևիկյան հայ պարբերական մամուլը պրոպագանդում և պաշտպանում էր նաև Սովետական կառավարության հողային դեկրետը։ Հողը հայտարարելով համաժողովրդական սեփականություն, Սովետական կառավարությունը, բոլշևիկյան պարտիան ոչ միայն իրականացնում էին աշխատավոր գյուղա-

[1] Հետաքրքրական է, որ բոլշևիկյան մամուլը, անդրադառնալով Սովետական կառավարության կողմից հրապարակված ցարական դաղանի դիվանագիտության փաստաթղթերին, բացահայտել է «հայկական հարցի» վերաբերյալ անգլո-ֆրանսիական և ռուսական բուրժուազիայի փարիսեցիական խոստումների բուն նպատակները, ծաղրել ու քննադատել դաշնակցական վայ-դիպլոմատներին։ «Բանվորի կռիվ» 1917 թ. 49-րդ համարում տպագրված «Դաշնակից» և հայ դիպլոմատները» վերնագրով հոդվածում Ա. Մռավյանը (Ա. Մանսուրյան) գրում էր. «Բանվորական և գյուղացիական կառավարությունը շեշտակի մի հարվածով պատռեց այն վարագույրը, որի ետև այս պատերազմի ընթացքում ռուսական, անգլիական և ֆրանսիական բուրժուազիան առյուծի իրենց խաղն են խաղացել «հայկական հարցի» հետ... Լենինի կառավարությունը իր սպանիչ լույսը գցեց դիպլոմատական այն ախոռի վրա, որտեղ Վորոնցով-Դաշկովները, Սազոնովները, Միլյուկովները, Տերեշչենկոներն ու Բիրոները կերակրել են հայ ժողովրդի հաստագլուխ և բթամիտ դիպլոմատներին»։

[2] «Կարմիր օրեր», № 14, 1918։

[3] «Բանվորի կռիվը», № 40, 1917։

[4] «Բանվորի կռիվը», № 51, 1917։

ցիության դարավոր երազանքը՝ հող ձեռք բերելու վերաբերյալ, այլև նոր հիմքի վրա ամրապնդում էին պրոլետարիատի ու չքավոր գյուղացիների ռևոլյուցիոն դաշինքը։ Այդ դեկրետը ցույց տվեց բուրժուական ու մանրբուրժուական պարտիաների ամբողջ սնանկությունը, մերկացրեց գյուղացիությանը խաբելու, նրա ռևոլյուցիոն ձեռներեցությունը կաշկանդելու բոլոր փորձերը։ «Բոլշևիկների կառավարությունը ապացուցեց,— գրում էր «Բանվորի կռիվը»,— որ նրա դրոշակի վրա գրված հողի պահանջը միամիտ ու հողակարոտ գյուղացիներին խաբելու համար չի գրված, այլ իբրև գործնական ծրագիր, որն արդեն առանց տատանումների իրագործվում է։ Լենինի կառավարությունը չունևոր գյուղացիներին չխաբեց հողի հարցում, ընդհակառակը, անխզելի կերպով կապեց, միացրեց նրանց հեղափոխական պրոլետարիատի հետ»[1]։

Սովետական Ռուսաստանում կատարվող ազգարային հեղաշրջումը, բոլշևիկյան պարտիայի, Սովետական կառավարության ազգարային քաղաքականությունը հանգամանորեն լուսաբանվում էին «Լռուվա գյուղացիության ձայնը» թերթում։ «Հողային դեկրետը» վերնագրով հատուկ հոդվածում թերթը կոչ էր անում. «Հողազուրկ ու տանջված լոռեցինե՛ր, լավ լսեցեք, թե ինչ է ասում հողային էդ նշանավոր դեկրետը, աղքատ ու աշխատավոր գյուղացիության էդ մեծ Օրենքը... Դե՛հ, սիրելի լոռեցինե՛ր, պաշտպանեցեք էդ Մեծ Օրենքը... ժողովրդի թշնամիների դեմ և իրականացրեք ձեր իրավունքները։

«Կորչե՛ն մեր միջից պամեշչիկները, ազնվականները, հողատերերը»[2]։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի միամսյակին նվիրված «Հացի, հողի և խաղաղության կառավարությունը» վերնագրով առաջնորդողում «Բանվորի կռիվը» կոնկրետ օրինակներով ապացուցում էր, որ Սովետական կառավարությունը լիովին արդարացրեց ժողովրդական լայն մասսաների սպասելիքները։ «Մեր կյանքի ամենահիմնական հարցերի՝ հացի, հողի և խաղաղության վերաբերմամբ,— գրում էր թերթը,— նա, այդ նոր տեսակի կառավարությունը տվավ իր պոտ գործնական, իրագործելի և միաժամանակ արմատական հեղափոխական որոշումները, որ ապշեցուցիչ եռանդով արդեն գործադրվում են»[3]։

Բոլշևիկյան մամուլը մասնավորապես շեշտում էր Սովետական կառավարության որոշումների գործնական, արմատական-ռևոլյուցիոն բնույթը։ Դրանով բոլշևիկյան թերթերն ընդգծում էին, որ Սովետական կառավարությունը նոր տիպի կառավարություն է, ժողովրդի շահերի իսկական արտահայտիչն ու պաշտպանը, միաժամանակ ցույց էին տալիս այն սկզբունքային-դասակարգային տարբերությունը, որ գոյություն ուներ նրա և բուրժուական նախկին կառավարության միջև։ «Հոկտեմբերյան հեղափոխությունը մի կողմ շպրտեց խոսքի ու թղթի մարդկանց,— գրում էր «Բանվորի կռիվը»,— ...Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանի կենտրոնական իշխանության գլուխ կանգնեցրեց մարդկանց, որոնք խոսքից գործի անցնելով՝ գյուղացուն հող տվին, իսկ բանվորին՝ արդյունաբերական կյանքը տնօրինելու հսկայական իրավունք հատկացրին»[4]։

---

[1] «Բանվորի կռիվը», № 51, 1917։
[2] «Լռուվա գյուղացիության ձայնը»—Լոռի-Հաղպատ, № 4, 1920։
[3] «Բանվորի կռիվը», № 51, 1917։
[4] «Բանվորի կռիվը», № 3, 1918։

* * *

1917—1920 թթ. բոլշևիկյան հայ պարբերական մամուլում առանձնահատուկ տեղ են գրավում Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ազգային քաղաքականության լուսաբանումն ու պրոպագանդան։

Սովետական իշխանության ազգային քաղաքականության հիմնական սկզբունքները հռչակվեցին Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների Դեկլարացիայում, որը հաստատվեց Ժողովրդական Կոմիսարների Սովետի կողմից 1917 թ. նոյեմբերի 2(15)-ին։ Հաջորդ օրը դեկլարացիան հրապարակվեց «Պրավդա»-ում։

Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների Դեկլարացիայի կարևորագույն նշանակություններից մեկն էլ այն էր, որ նա, հռչակելով լենինյան ազգային քաղաքականության սկզբունքները, Ռուսաստանի ծայրամասերի՝ դեռևս կապիտալի լծի տակ հեծող ժողովուրդներին ցույց էր տալիս նրանց ազատագրության միակ ճշմարիտ ուղին. «Ազգերի ազատագրության գործը սիայն և միմիայն սոցիալիստական հեղափոխության գործն է»[1]։

Սովետական կառավարությունը անհապաղ անցավ ազգերի ինքնորոշման լոզունգի պրակտիկ կենսագործմանը։ 1917 թ. դեկտեմբերի 18-ին ՌՍՖՍՌ Ժողկոմսովետը հրապարակեց դեկրետ Ֆինլանդական ռեսպուբլիկայի անկախության վերաբերյալ. դեկտեմբերի 22-ին ՀԿԳԿ-ն ընդունեց «Ռևոլյուցիոն կառավարության դեկլարացիան՝ Ֆինլանդիայի անկախության մասին»։

1918 թ. հունվարի 11-ին Սովետական կառավարությունն ընդունեց դեկրետ «Թուրքահայաստանի» մասին։

Ճիշտ է, քաղաքական և պատմական իրադրությունները հետագայում այնպես դասավորվեցին, որ Անդրկովկասի հակասովետական բլոկի և օտարերկրյա իմպերիալիստների կամակատար դաշնակների կոնտրռևոլյուցիոն քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի հայերին զրկեց ինքնորոշման իրավունքից օգտվելու հնարավորությունից, բայց «Թուրքահայաստանի» մասին դեկրետը հսկայական նշանակություն ունեցավ հայ աշխատավորության մեջ Սովետական կառավարության ազգային քաղաքականությունը պրոպագանդելու, նրան սոցիալիստական Ռուսաստանի շուրջը համախմբելու գործում։ Այդ նպատակով «Թուրքահայաստանի» մասին դեկրետը լայնորեն օգտագործեցին մասնավորապես բոլշևիկյան հայ թերթերը։

Տպագրելով այդ դեկրետը[2], բոլշևիկյան հայ թերթերը միաժամանակ հատուկ հոդվածներ էին նվիրում նրա պարզաբանմանը։ Այս առումով զգալի աշխատանք կատարեց հատկապես «Բանվորի կոիվը»։ Արժեքավոր են «Միջազգերի հայությունը և Անգլիայի իմպերիալիզմը» (1918 թ., № 10), «Ժողովրդական Կոմիսարների խորհուրդը և հայկական հարցը» (1918 թ., № 11), «Հայկական հարցը և խորհուրդները» (№ 16, 1918 թ.), «Գորդյան հանգույցը» (1918 թ, № 28) և այլ հոդվածները։

---

[1] «Կոմունիստ»—ՌՍՖՍՌ Ազգությունների ժողկոմատի հայկական գործերի կոմիսարիատի օրգան, Մոսկվա, № 1, 1918։

[2] «Թուրքահայաստանի» մասին դեկրետն առաջին անգամ լույս տեսավ «Պրավդա»-ի 1917 թ. 221-րդ համարում, այնուհետև «Իզվեստիա»-ի № 1-ում, 1918 թ. «Բանվորի կռիվը» թերթում, «Բանվորի խոսք»-ի № 1-ում, 1918։

Առաջին հոդվածում, Սովետական կառավարության հրապարակած գաղտնի պայմանագրերի հիման վրա մերկացնելով անգլիական իմպերիալիստների և ցարիզմի միջև «Թուրքահայաստանի» ու Միջագետքի ժողովուրդների հաշվին կնքված գործարքի գաղութարարական էությունը, թերթը գրում էր. «Իմպերիալիզմն իր հաշիվներն ունի, որոնք ոչ մի առնչություն չունեն մարդասիրության հետ։ Անգլիական իմպերիալիզմը կաղատագրե հայերին ճիշտ այնպես, ինչպես նա «ազատագրել» է իռլանդացիներին, հնդիկներին... Ինչպես բոլոր ճնշված ժողովուրդներին, այնպես էլ թուրքահայերի թշնամին միջազգային իմպերիալիզմն է, որ զենք է ծառայեցնում բռնությունն ու շահագործումը»։

Իսկ ո՞րն էր հայ ժողովրդի փրկությունը, ո՞րն էր Արևմտյան Հայաստանի հայ աշխատավորության ազատագրության ճշմարիտ ճանապարհը. «Թուրքահայությունը,— շարունակում էր թերթը,— պետք է փարվի Ռուսաստանի Հոկտեմբերյան Մեծ հեղափոխությանը, նրա հաղթանակի մեջ պետք է տեսնե իր հաղթանակը և ամբողջ աշխարհի առաջ պետք է իր ազգու և հեղափոխական ձայնը բարձրացնե նրանց դեմ, ում զոհն է եղել ինքը»։

«Բորդյան հանդույցը» վերնագրով հոդվածում «Բանվորի կռիվը» բուռն կրքոտությամբ պաշտպանում էր «Թուրքահայաստանի» մասին դեկրետը մենշևիկ Ս. Տ. Արկոմեդի (Ղարաջյան) ցինիկ ու պրովոկատորական հարձակումներից[1]։

1918 թ. 19-րդ համարում «Բանվորի կռիվը» «Իզվեստիա»-ից արտատպեց ՌՍՖՍՌ Ազգությունների գործերի ժողկոմ Ի. Վ. Ստալինի «Թուրքահայաստանի» մասին» հոդվածը, որտեղ բացատրված են այդ դեկրետի ընդունման շարժառիթները, նրա նշանակությունը և «Թուրքահայաստանի» օրինակով ցույց է տրված Սովետական կառավարության ազգային քաղաքականության հիմնական սկզբունքը։ «Այժմ պարզ է ամենքի համար,— ասված էր հոդվածում,— որ Ռուսաստանի ժողովուրդների բախտը, իսկ առանձնապես հայ ժողովրդի բախտը, սերտորեն կապված է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի բախտի հետ... Թող ամենքն իմանան, որ ազգային ճնշման իմպերիալիստական քաղաքականությանը ժողովրդական Կոմիսարների Սովետը հակադրում է ճնշված ժողովուրդների լիակատար ազատագրության քաղաքականությունը»։

«Թուրքահայաստանի» մասին դեկրետի պրոպագանդումով ու պաշտպանությամբ բոլշևիկյան հայ պարբերական մամուլը կոնկրետ փաստերի հիման վրա ընդհանրացնում էր, թե «Ազգերի ինքնորոշման սկզբունքը սոսկ մեռած տառ կամ գեղեցիկ շարժում չի ուզում թողնել Խորհուրդների իշխանությունը»[2]։

Տեղական բուրժուազիան ամեն ինչ անում էր, որպեսզի իր տիրապետության սահմաններում ապրող պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիության դասակարգային պայքարը մտցներ նացիոնալիստական հունի մեջ, կրտրեր նրանց հարևան երկրների, մասնավորապես Ռուսաստանի պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարից։ Հայտնի է, որ Անդրկովկասյան Սեյմի ղեկավարները 1918 թ. ապրիլի 23-ին Անդրկովկասը անկախ հայտարարելով Ռուսաստանից, իրենց այդ հակաժողովրդական, կոնտրռևոլյուցիոն քայլը փորձում էին նենդա-

[1] Տես մենշևիկյան «Պայքար»-ի 1918 թ. 21-րդ համարում զետեղված «Հայաստանի» մասին դեկրետի առթիվ» վերնագրով նրա հոդվածը, որտեղ այդ մոլի հակաբոլշևիկը ուղղակի հայտարարում էր. «Հայկական հարցի լուծումը... կապված է Թուրքիայի և առավելապես Գերմանիայի բարի կամքի հետ»։

[2] «Բանվորի կռիվը», № 16, 1918։

փոխել այնպես, որ իբր թե իրենք օգտվում են ոչ ավել, ոչ պակաս՝ ազգերի ինքնորոշման իրավունքից։

Հարկավոր էր ամենայն անողոքությամբ պայքարել ազգերի ինքնորոշման լոզունգի բուրժուական խեղաթյուրման դեմ, կոփել պրոլետարիատի ինտերնացիոնալիստական միասնությունը։ Պատահական չէր, որ ազգերի ինքնորոշման մասին խոսելիս՝ Վ. Ի. Լենինը շեշտում էր տեղական նացիոնալիզմի դեմ պայքարը սրելու անհրաժեշտությունը։

Պարզաբանելով ու պաշտպանելով ազգերի ինքնորոշման իրավունքի լենինյան ըմբռնումը և ընդգծելով նրա պրակտիկ նշանակությունը կապիտալի լծից աշխատավորության ազատագրման համար մղվող պայքարում, «Կարմիր դրոշակ»-ը գրում էր. «Մեր ձևքում ազգային ինքնորոշման լոզունգը կոմունիստական հեղափոխության զարգացման ու լայնացման պայմաններից մեկն է... Մեզ վրա կոմունիստական հեղափոխությունը սրբազան պարտք է դնում, որ մենք, լցնելով ազգային ինքնորոշման լոզունգը կոմունիստական բովանդակությամբ՝ ամեն ջանք գործ դնենք ազգային-ազատագրական շարժումը վերածելու հեղափոխական դասակարգային կռվի»[1]։

Պրոպագանդելով Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների Դեկլարացիան, բոլշևիկյան հայ թերթերը նշում էին, որ պետք է հիմք ընդունել հետևյալ երկու հանգամանքները. մի կողմից՝ այդ Դեկլարացիայի սկզբունքները Անդրկովկասում, մասնավորապես Հայաստանում ևս իրականացնելու համար անհրաժեշտ է այդտեղ նույնպես հաստատել պրոլետարիատի դիկտատուրա. մյուս կողմից՝ այդ դիկտատուրան հաստատելու համար, իր հերթին, անհրաժեշտ է օգտագործել Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների Դեկլարացիայի մոբիլիզացնող ուժը։ Գնահատելով Սովետական կառավարության, Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության նշանակությունը կապիտալի լծից աշխատավորության ազատագրման համար մղվող պայքարում, «Կարմիր դրոշակ»-ը եզրակացնում էր... «Ազգային ինքնորոշման լոզունգը, այդ լոզունգի իսկական անկեղծ իրագործումը պրոլետարիատի կողմից հասնում է երկու նպատակի՝ նախ նա քանդում է մասսաներին կաշկանդող շովինիզմի կապանքները, ապա հեշտացնում է հեղափոխական դասակարգային պայքարը ազգային բուրժուազիայի դեմ և ապահովում պրոլետարական հեղափոխության հաղթանակը այդ ազգերի երկրներում»[2]։

*

Սովետական կառավարության ազգային քաղաքականության ճշմարտացի լուսաբանման կարևորությունն ավելի պարզ կդառնա, եթե նկատի ունենանք կապիտալի իդեոլոգների, բուրժուական թերթերի կողմից տարածվող այն կեղծիքը, որ իբր թե Սովետական իշխանությունը շարունակում էր ցարիզմի նախկին գաղութարարական քաղաքականությունը, ձգտում էր բռնի կերպով Ռուսաստանի սահմաններում պահել նրա կազմի մեջ մտնող փոքր ազգություններին, իրագործել իր «աշխարհակալական» ձգտումները։ Զրպարտիչ-պրովոկատորների այդ ոհմակի մեջ իրենց արժանավոր տեղն ունեին դաշնակցական «Հառաջ»-ը, մենշևիկյան «Պայքար»-ը, էսերական «Սոցիալիստ-հեղա-

[1] «Կարմիր դրոշակ», № 11, 1919։
[2] Նույն տեղում։

փոխական»-ը, «Ժողովուրդ» թերթուկը և բուրժուական մամուլի մյուս օրգանները։ Պատասխանելով նրանց հարձակումներին, Բաքվի «Կոմունիստ»-ը գրում էր. «Կապիտալի սպասավորներ-սրիկա դաշնակները, որոնք երկիրը արյան ծով են դարձրել և շատերին այդ ծովի մեջ խեղդել, խոսում են այն Խորհրդային Ռուսաստանի մասին, որը կռվելով բոլոր երկրների բուրժուազիայի հետ, խորտակելով Դենիկինի, Կոլչակի և Յուդենիչի նման արյունարբու գազաններին և պայքարելով աշխատավորների բոլոր թշնամիների դեմ, աղատել է ցարական ստրկությունից բոլոր մանր ազգություններին...»[1]։

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ քաղաքացիական կռիվներում և օտարերկրյա ինտերվենտների դեմ բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ Ռուսաստանի պրոլետարիատի ու չքավոր գյուղացիության մղած հերոսական պայքարի ամբողջ ընթացքում բոլշևիկյան հայ թերթերը ևս բարձր ծածանեցին սոցիալիստական հայրենիքի պաշտպանության սրբազան դրոշը։ Այդ ուղղությամբ զգալի աշխատանք կատարեցին հատկապես «Բանվորի կռիվը» (Թիֆլիս), «Բանվոր»-ը (Թիֆլիս), «Կոմունիստ»-ը (Մոսկվա), «Խոսք»-ը (Երևան), «Կարմիր դրոշակ»-ը (Թիֆլիս), «Կարմիր օրեր»-ը (Թիֆլիս), «Կարմիր դրոշակ»-ը (Մոսկվա), «Կոմունիստ»-ը (Բաքու), «Պահակ»-ը (Թիֆլիս), «Կարմիր աստղ»-ը (Կրասնոդար), «Բանվորի կռիվ»-ը (Ռոստով - Նախիջևան)։

Նկարագրելով Ռուսաստանում ստեղծված իրադրությունը, մերկացնելով միջազգային բուրժուազիայի և ներքին կոնտրռևոլյուցիայի դավադրությունները Սովետների երկրի դեմ՝ բոլշևիկյան հայ թերթերը ամենուրեք հանդես եկան «Սոցիալիստական հայրենիքը վտանգի մեջ է» լենինյան կոչի պրոպագանդայով և կրքոտ պաշտպանությամբ։ Նրանք ռևոլյուցիոն պայքար ծավալեցին մասնավորապես Անդրկովկասի հակասովետական բլոկի, բուրժուական և բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դեմ, որոնք գրկախառնվելով Ռուսաստանի ներքին կոնտրռևոլյուցիոն ուժերի հետ և ձեռք մեկնելով միջազգային իմպերիալիզմին՝ ձգտում էին Անդրկովկասը դարձնել պրոլետարիատի դիկտատուրայի դեմ ուղղված ռազմա-քաղաքական պլացդարմ։ «Իմպերիալիստ գահճապետների սոչին,— գրում էր «Կարմիր դրոշ»-ը,— քարշ են գալիս ամենուրեք բոլոր սոցիալ-դավաճան, սոցիալ-մարդասպան, սոցիալ-հուդաները, հանձինս մենշևիկների, սոցիալ-հեղափոխականների, մուսավաթիստների, դաշնակցականների, հնչակյանների, սոցիալ-դեմոկրատ հայ կազմակերպության և այլն»[2]։

Այդ պայքարում բոլշևիկյան հայ պարբերական մամուլի ելակետն էր այն նպատակադրումը, թե Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի «...ժողովուրդները թույլ չպիտի տան, որ իմպերիալիզմը թիկունքից հարված հասցնե սոցիալիստական բանակներին...»[3]։

Բոլշևիկյան հայ պարբերական մամուլում որոշակի տեղ է հատկացված Կարմիր Բանակի ստեղծման, նրա բնույթի պարզաբանման, օտարերկրյա ինտերվենտների դեմ նրա ձեռք բերած մեծագույն հաղթանակների արժեքավորման ու գնահատման հարցերին։ «Խորհուրդների իշխանությունը,— գրում էր «Կարմիր դրոշակ»-ը,— Ռուսաստանում ցրելով ցարական միլիտարիզմը,

---

[1] «Կոմունիստ», Բաքու, № 71, 1920։
[2] «Կարմիր դրոշակ», № 5, 1919։
[3] «Կարմիր օրգր», № 7, 1918։

ստեղծեց սոցիալիստական զորք՝ Կարմիր Բանակը, որը փայլուն հաղթանակներով տարի ու կես շարունակ մաքառում է հակահեղափոխականների, իմպերիալիստների խոշորագույն ուժերի դեմ և իր անվեհեր կռվով հիացմունք պատճառում համաշխարհային պրոլետարիատին»[1]։

Սովետական Ռուսաստանի «նվաճողական» ձգտումների մասին հերյուրանքները բուրժուական մամուլում ավելի հաճախակի սկսեցին երևալ հատկապես այն ժամանակ, երբ Կարմիր Բանակը, ջախջախելով ինտերվենտներին ու ներքին կոնտրռևոլյուցիոն ուժերին՝ մոտեցավ Կովկասի մատույցներին։

Կարմիր Բանակի առաջխաղացումը սպառնում էր անգլո-ամերիկյան, ֆրանսիական և մյուս իմպերիալիստների տիրապետությանը Անդրկովկասում. իսկ առանց նրանց օգնության անհնար էր դաշնակցական, մենշևիկյան ու մուսավաթիստական բռնապետությունների գոյությունը։ Ահա թե ինչու այդ պարտիաները Սովետական Ռուսաստանի դեմ մղած պայքարն ամեն կերպ կապակցում էին իրենց օտարերկրյա տերերի պաշտպանության հետ՝ ճգնելով «ապացուցել» նրանց տիրապետության պահպանման անհրաժեշտությունն Անդրկովկասում։ Ինտերվենտներն էլ հանձինս Անդրկովկասի «անկախ ռեսպուբլիկաների», տեսնում էին իրենց հավատարիմ դաշնակիցներին՝ Սովետական իշխանության դեմ մղվող խաչակրաց արշավանքում։

Այս պայմաններում Անդրկովկասի տիրապետող դասակարգերն ու կոնտրռևոլյուցիոն պարտիաները պրոպագանդայի կրակն ուղղեցին Կոմունիստական պարտիայի, Սովետական կառավարության ազգային քաղաքականության դեմ՝ Կարմիր Բանակն ու Սովետական Ռուսաստանը պատկերելով որպես Անդրկովկասի նկատմամբ «նվաճողական» ձգտումներ ունեցող, անդրկովկասյան «ռեսպուբլիկաների» «անկախությանը», նրանց ժողովուրդների «ինքնուրույնությանը» սպառնացող ուժ։ «Վրացական մենշևիկները և հայ դաշնակները,— գրում էր «Կոմունիստը»-ը,— միացյալ խումբ են կազմել և բառբառում, բողոքում են, որ իբր թե «Խորհրդային Ռուսաստանը ուզում է կուսությունից զրկել անդրկովկասյան «մաքուր» դեմոկրատիային և մեր դեղեցիկ երկիրը քաղաքացիական կռվի վայր դարձնել»[2]։

Մերկացնելով բուրժուա-նացիոնալիստական մամուլի աղմկարարությունը հյուսիսից, Սովետական Ռուսաստանից սպառնացող վտանգի մասին, բոլշևիկյան Ներքերը նշում էին, որ ճիշտ է, կա այդպիսի վտանգ, որը, սակայն, ուղղված է ոչ թե Անդրկովկասի աշխատավորական մասսաների, այլ բուրժուական կառավարությունների ու պարտիաների դեմ[3]։

Ընդգծել է, որ բուրժուական մամուլը կաշվից դուրս էր գալիս «ապացուցելու» համար, թե մանր ազգությունների ինքնուրույնության պաշտպանությունն ու փրկությունը կարելի է գտնել միմիայն իմպերիալիստական «քաղաքակիրթ» պետությունների խնամակալության մեջ։ «Լռվա գյուղացիության ձայնը» բոլշևիկյան թերթը ընդգծում էր, որ իսկական անկախության և ինքնորոշման սկզբունքների միակ կրողը Սովետական Ռուսաստանն է, որը ազատություն է բերում ինչպես մյուս բոլոր, այնպես էլ Անդրկովկասի ժողովուրդներին, և աշ-

[1] «Կարմիր դրոշակ», № 5, 1919։

[2] «Կոմունիստ», Բաքու, № 71, 1920։

[3] Տե՛ս «Մանվորի կոչ», ՌԿ(բ)Պ Ռոստով-Նախիջևանի կազմակերպության հայկական սեկցիայի օրգան, № 17, 1920։

խաղաղավոր ու շահագործվող մասսաներին կոչ էր անում եղբայրության, դասակարգային համերաշխության ձեռք մեկնել ռուսական ռևոլյուցիային՝ թաքցնելու համար և՛ իմպերիալիստների «խնամակալության», և՛ «իրենց» ազգային կապիտալիստների ծանր լուծը։ «Ազգերի անկախության, ժողովուրդների ինքնորոշման գաղափարը,— գրում էր թերթը,— Ռուսաստանի մեծ հեղափոխության լոզունգն է և կովկասյան տանջված ժողովուրդները կարիք չունեն եվրոպական իմպերիալիստների խնամակալության՝ իրանց ազատագրման գործում»[1]։

Կարմիր Բանակի հաղթական առաջխաղացումը և բանվորա-գյուղացիական մասսաների ռևոլյուցիոն շարժումների վերելքը կոմունիստական կազմակերպությունների, բոլշևիկյան թերթերի առջև խնդիր դրին՝ է՛լ ավելի ուժեղացնել Սովետական կառավարության ազգային քաղաքականության պրոպագանդան, ըստ որում այդ պրոպագանդայի հիմքն էր դարձվում այն ճշմարտության ընդգծումը, թե ստրկացումից ու կործանումից Անդրկովկասի ժողովուրդների միակ փրկությունը սոցիալիստական Ռուսաստանի հետ եղբայրական միասնության և ռուսական պրոլետարիատի աջակցությամբ տեղերում Սովետական իշխանության հաստատման մեջ է։ «Խորհրդային իշխանությունը,— ընդգծում էր «Պահակ»-ը,— ոչ մի նվաճողական ձգտում չունի դեպի մանր ժողովուրդները։ Ընդհակառակը, այդ իշխանությունն է միակը, որ հետևողականորեն և համառ՝ իրականացնում է ազգերի ինքնորոշման սկզբունքը իր ընդարձակ տերիտորիայում... Դենիկինյան հակահեղափոխության դիակների վրայով մոտենում է կովկասյան բանվորների ու գյուղացիների հեղափոխության արշալույսը»[2]։

Նկարագրելով ցարիզմի և բուրժուական ժամանակավոր կառավարության օրոք մոլեգնած ազգային անհավասարությունը, ճնշումն ու հալածանքը Ռուսաստանում և ընդգծելով Սովետական իշխանության վարած լենինյան ազգային քաղաքականության դրական արդյունքներն ու նշանակությունը՝ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ազգային հարցը» վերնագրով անստորագիր հոդվածում «Կարմիր աստղ»-ը գրում էր. «Ռուսաստանում ապրող յուրաքանչյուր մեկը կարող է ասել, որ այդ ապատությունները թղթի կտորներ չեն, որ այդ քաղաքականությունը կիրառվել է և կիրառվում է իր ամբողջությամբ... Հոկտեմբերյան հեղափոխությունը վճռականապես կարողացավ լուծել ազգային հարցը»[3]։

Բոլշևիկյան հայ թերթերը աշխատավորական ամենալայն մասսաներին էին հասցնում Կոմունիստական պարտիայի համագումարների ու կոնֆերանսների կարևորագույն որոշումները ազգային հարցի վերաբերյալ։ Նրանք ընդգծում էին, որ միայն բոլշևիկների պարտիան է, որ ճշմարիտ, արդարացի կերպով դնում և լուծում է ազգային հարցը։ «Դիվանագիտական պատվիրակություն» վերնագրով հոդվածում «Խոսք»-ը նշում էր, որ «հին տիպի դիպլոմատները երբեք բավարար կերպով չեն լուծի ազգային հարցերը», որ նրանք ընդունակ են միայն խճճելու այդ հարցերը։ Այնուհետև քաղվածքներ բերելով ազգային հարցի մասին ՌՍԴԲՊ(բ) 7-րդ Ապրիլյան կոնֆերանսի բանաձևից, թեր-

[1] «Լոսվա գյուղացիության ձայնը», № 2, 1920։

[2] «Պահակ», Թիֆլիս, № 1, 1920։

[3] «Կարմիր աստղ», ՌԿ(բ)Պ Կուբանո-Չերնոմորյան սեկրետարիատին կից Արևելյան ազգությունների բաժնի օրգան, Կրասնոդար, № 128, 1921։

թը պաշտպանում և պրոպագանդում էր բոլշևիկյան պարտիայի ազգային քաղաքականության հիմնական սկզբունքները։

Կոմունիստական պարտիայի հռչակած ազգային քաղաքականության սկզբունքները և դրանց կիրառումը ինչպես երկրի ներսում, այնպես էլ Սովետական Կառավարության արտաքին հարաբերությունների բնագավառում, ունեին միջազգային-պատմական նշանակություն։ Ի հակադրություն 2-րդ ինտերնացիոնալի օպորտունիստական պարտիաների, մարքս-լենինյան, ռևոլյուցիոն տեսակետով դնելով ու լուծելով ազգային և ազգային-գաղութային հարցը, բոլշևիկյան պարտիան, Սովետական կառավարությունը իրենց ազգային քաղաքականությամբ հուժկու թափ հաղորդեցին ազգային-ազատագրական շարժումներին։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի համաղարկերից արթնացած գաղութային և կախյալ երկրների ժողովուրդները իմպերիալիզմի ռեզերվից դարձան պրոլետարական ռևոլյուցիայի ռեզերվը։ Իմպերիալիզմի հիմքերը խորապես խարխլվեցին ոչ միայն «մայր» երկրում, այլև ամենահեռավոր գաղութներում։ Համաշխարհային կապիտալիզմն ապրում էր ընդհանուր ճգնաժամ։ «Երիցս անգամ ճիշտ է,— գրում էր «Բանվորի կոիվ»-ը,— որ Խորհրդային Ռուսաստանը ազգերի ինքնորոշման լոզունգով ջարդեց Արևելքի ժողովուրդներին կաշկանդող իմպերիալիստական գերության շղթաները, դրավեց կեղեքվողների համակրանքը և ստեղծեց Արևելքում մի ընդհանուր հակաիմպերիալիստական ֆրոնտ՝ ի սարսափ Սիտիի ցիլինդրավոր ավազակների և խաբեբա «իմաստուն Սողոմոնների»... Ազգային ինքնորոշման իրավունքով մենք փոթորկում ենք ընած Արևելքը, կյանքի ենք կանչում միլիոնավոր մասսաների»[2]։

Ազգերի ինքնորոշման լոզունգը սոցիալիստական ռևոլյուցիայի հզոր ազդակ հանդիսացավ նախ և առաջ Ռուսաստանի ծայրամասերում ապրող ժողովուրդների համար, որոնք դեռևս հնձում էին «հայրենի» և օտարերկրյա կապիտալիստների գերիշխանության տակ։ Նշելով, որ «մինչև այժմ գոյություն ունեցող բոլոր պետություններից միայն Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությունն է, որ իր նախկին սահմաններում եղած բոլոր ճնշված մանր ազգություններին... ազատություն է տվել», «Կարմիր աստղ»-ը գրում էր. «Խորհրդային կառավարությունը ցանկանում է, որ այդ մանր ազգերի բանվորները և չքավոր գյուղացիները, Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, իշխանությունը վերցնեն իրենց ձեռքը»[3]։

Պայքարի այդպիսի ուղի էին բռնել նաև Անդրկովկասի պրոլետարիատն ու աշխատավոր գյուղացիությունը։ Բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ նրանց մղած ռևոլյուցիոն պայքարը նոր թափ ստացավ հատկապես այն բանից հետո, երբ Կարմիր Բանակը հաղթարշավ մոտենում էր Կովկասի սահմաններին։ Այս հանգամանքը գնահատելով որպես Անդրկովկասի բանվորների ու աշխատավոր գյուղացիների դասակարգային պայքարի հաղթանակին նպաստող կարևոր գործոններից մեկը, բոլշևիկյան հայ պարբերական մամուլն ամբողջ ուժով ընդգծում էր այն միտքը, թե Սովետական Ռուսաստանը, հերոսական Կարմիր Բանակը Անդրկովկասի աշխատավորների միակ, ամենահու-

---

[1] Տե՛ս «Խոսք», Երևան, № 7, 1918։

[2] «Բանվորի կոիվ», ՌԿ(բ)Պ Ռոստով-Նախիջևանի կազմակերպության Հայկական սեկցիայի օրգան, Ռոստով-Նախիջևան, № 25, 1920։

[3] «Կարմիր աստղ», հունվարի 22, № 45, 1921։

սալի բարեկամն ու զինակիցն են, թե Անդրկովկասում Սովետական իշխանություն հաստատելով միայն կարելի է ապահովել ժողովուրդների իրական ազատությունն ու անկախությունը։ «Խորհուրդների իշխանությունն ու Անդրկովկասը» վերնագրով առաջնորդող հոդվածում «Պահակ»-ը գրում էր. «Ռուսական Կարմիր պրոլետարիատը հերոսական կռիվ մղելով դենիկինյան հակահեղափոխության և եվրոպական իմպերիալիստների դեմ՝ ոչ միայն պաշտպանում է իր հեղափոխական խորհուրդների գոյության իրավունքը, այլ նաև թափում է իր թանկագին արյունը բոլոր ճնշված ու հալածական ժողովուրդների ազատագրության համար»[1]։

Սոցիալիստական Ռուսաստանի եղբայրական օգնության շնորհիվ Անդրկովկասի պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիության ռևոլյուցիոն պայքարը, բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ, շուտով պսակվեց հաղթությամբ։ Ադրբեջանը, Հայաստանն ու Վրաստանը դարձան սովետական։ Դեռ սպասվեցին Մեծ Հոկտեմբերի ազատաբեր պատգամները. Հոկտեմբերյան ռևոլյուցիան ազատություն և անկախություն բերեց նաև Անդրկովկասի ժողովուրդներին։

---

[1] «Պահակ», № 7, 1920։